

ւար, վերջինիս հաշուով: Ձեռագրին ծանօթանալուց յետոյ՝ յանձն առինք այդ առաջարկութիւնը, որ ստացաւ նաեւ Պ. Գ. Սինապեանի հաւանութիւնը: Եւ այնուհետեւ, Գեորգ Գ. -ի կենսագրութիւնը լոյս տեսաւ «Վէմ»-ի 20 քւերում եւ սպարամատերը իւրաքանչիւր պրակից 500-ական օրինակ աւելի տպեց 'Նուպարեան Մատենադարանի համար:

Բայց տեսէք, քէ Սֆուար Ալբոնիում ի՞նչ բարբեր են տիրում: Երբ ձեռագրի առաջին մասը լրացնելուց յետոյ՝ տպարանը հաշիւ ներկայացրեց Մատենադարանի վարչութեան՝ վերջինս մերժեց՝ առարկելով, քէ իր կողմից այդ տեսակ ասպարանք չի արած եւ, հետեւաբար, ինքը չի կարող ընդունել 500 օրինակ

գիրքը: Ի՞նչ անէինք. Գ. Սինապեանը գերեզմանում էր, Պ. Ա. Անտոնեանի յիշողութիւնը տկարացել է, իսկ գրաւոր պայմանագրութիւն մէջտեղը չկայ — ո՞վ կարող էր ենթադրել, որ պարկեշտ մարդիկ այս տեսակ գործերում ստորագրած քղքերի պէտք ունեն — մնում էր, որ «Վէմ»-ը իր վտիւս ուժերով ֆաշէր այդ բեռն էլ: Եւ ի՞նչ էր գումարը — ընդամենը 1500 ֆր. 500 օրինակ 300 էջոց հատորի համար...

Բարեգործականը անհաշիւ դրամներ է ծախսում զանազան փուն բաների վրա: Զի՞ կարող մի փոքրիկ գումար էլ յատկացնել Մատենադարանի գրքոցներում հաւաքած պատմական քանգարժէք նիւթերի հրատարակութեան համար:

ՏՈՒԹ. Ն. Տ. Ս. ԹԱՇՃԵԱՆԻ ԳԻՐԻՔԸ

Բոստոնում լոյս է տեսել ծանօթ հանրային գործիչ Տոքթ. Ն. Տ. Ս. Թաշճեանի «Ատամնարուծական Առողջաբանութիւն» գիրքը — ընտիր քղքի վրա մտնուր տպագրած սիրուն կազմով մի հատոր: Մասնագէտները վկայում են, քէ արժէքաւոր գործ է, բայց մեր ուշադրութիւնը գրաւողը այդ չէ: Մասնագիտական արժէքի մասին կը խօսին բժիշկները, մեզ հետաքրքրողը այն հանգամանքն է, որ գիրքը կազմւած է երկու լեզուով՝ ասոջին մասը հայերէն, յետոյ՝ նոյնը անգլիերէն: Որ ասել է, քէ Ամերիկայում կան շատ հայեր, որոնք այլեւս հայերէն չեն կարողում անաւո՛ր բան արտասահմանի հայ մըշակոյթի համար: «Երկու լեզուով պատ-

րաստած ըլլալու գաղափարիս ի՞նչ կըսես, գրում է հեղինակը մասնաւոր նամակում. կեանքի պահանջ է. աստիճանաբար դէպի ֆայֆայում կերթանք. անխուսափելի է: Տուներու մէջ, երեսակայէ՛, նոյն իսկ մեր տան մէջ, խօսակցութիւնը կէս առ կէս է. իսկ եքէ իմ յամառութիւնը չըլլար, այդ կէսն ալ գոյութիւն չէր ունենար: Ա՛յս է վիճակը»:

Այո՛, ա՛յս է: Եւ միա՞յն չիւս. Ամերիկայում. հոպա Հար. Ամերիկայում, հոպա Ֆրանսայում — ամէ՛ն տեղ՝ աւելի կամ պակաս: Տոքթ. Թաշճեանի գիրքը այդ տեսակէտով ակտանիչ է եւ անագանգ միաժամանակ:

